

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆՆ


ՈՒՂՂՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

Բաժանմունքը GOOGLE FORMS–ի միջոցով ապահովելով գաղտնիությունը էլեկտրոնային տարբերակով իրականացրել է ուսումնասիրություն՝ կրթական ոլորտում բարեփոխումների համար հիմք հանդիսանալու նպատակով: Նշենք, որ ուսանողներին անհատապես ուղակվել են հարցաթերթերը, պատասխանները լրացվել են և ետ ուղարկվել, արդյունքում իրականացվել է վերլուծություն: Առանձնահատուկ մատնանշում ենք այն փաստը, որ սվյալ ուսումնասիրության բարդությունները կապված էին հիմնականում հասկացությունների ընկալման, կարևորման և ուսանողության շրջանում ոլորտում առկա տեսանելի խնդիրների բարձրացման ցանկության հետ: Էական և դրական կողմերից մեկն այն է, որ ուսանողության մեծամասնությունը հարցման հարցաթերթը լրացնելուց առաջ նախ ծանոթացավ թե ինչ է մասնագիտական կրթական ծրագիրը, այնուհետև պատասխաններից պարզ է դառնում, որ բավականաչափ հանգամանալից կերպով փորձեց ներկայացնել հիմնական մի քանի խնդիր, որոնց լուծումը շատերի մոտ շուտափույթ անհրաժեշտություն է: Դրական կողմերից է նաև այն փաստը, որ այս մեթոդով հետազոտություններն իրականում ավելի արագ, կարճ և մատչելի են, քանի որ ուսանողներն իրենք են լրացնում հարցաթերթիկը, հարցերի պատասխանները միանգամից ավտոմատ կերպով ներմուծվում են կենտրոնացված համակարգչային բազա:


Այս հարցաթերթի էլեկտրոնային տարբերակը նրանց հնարավորություն տվեց ընթացքում յուրաքանչյուր տարածքից մասնակցել հարցմանը: Հարցմանը ուսանողները մասնակցել են կամավորության սկզբունքով , բայց և այնուամենայնիվ 50% -ից ոչ պակաս: Ստորև ներկայացնում ենք ուղարկված բոլոր հարցերն իրենց պատասխանների վերլուծական նկարագրությամբ:

1. Սեռ



Հարցմանը մասնակցել են 45,6% իգական և 54,4% արական սեռի ուսանողներ:

2. Տարիք




Հարցմանն առավելագույնը մասնակցել են 21-ից 24 տարեկան ուսանողներ:

28,9%-18-20տարեկան

43%-21-24 տարեկան


21,5%-25-30 տարեկան

6,7%-30 և ավել




Հարցմանն առավելագույնը մասնակցել են քոլեջի միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրս, 3-րդ դասակի ուսանողները, իսկ նվազագույնը Ակադեմիայի, մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողները:

4. Մասնագիտական կրթական ծրագիրը բավարարում է Ձեր մասնագիտական կարիքներին:




Ուսանողները նշել են, որ մասնագիտական կրթական ծրագիրը բավարարում է իրենց մասնագիտական կարիքներին:

5. Մասնագիտական կրթական ծրագիրը հագեցված է բավարար մասնագիտական դասընթացներով:




85,9 % ուսանողներ նշել են, որ մասնագիտական կրթական ծրագիրը հագեցված է բավարար մասնագիտական դասընթացներով:

6. Մասնագիտական կրթական ծրագրում առկա՞ է ոչ մասնագիտական դասընթացների հազեցվածություն:



Ուսանողները նշել են, որ առկա են կիսով չափ դժգոհություններ՝ կապված ոչ մասնագիտական դասընթացների հազեցվածության հետ:

7. Գնահատե՛ք մասնագիտական կրթական ծրագրի բարդությունը:




Ուսանողները տարակարծիք են կապված մասնագիտական կրթական ծրագրի բարդության հետ, սակայն այնուամենայնիվ 27,5%-ը նշել են, որ մասնագիտական կրթական ծրագիրը պարզ է:

8. Նշեք այն առարկաները, որոնք մասնագիտական կրթական ծրագրերում առկա չեն, բայց Ձեր կարծիքով պարտադիր բնույթ են կրում Ձեր մասնագիտության դեպքում: (Կրկնվող պատասխանները ներառված չեն)

Ֆիզիկա,
Բարոյագիտություն,
Դոկտրինալ բնագրեր,
Մաթեմատիկա,
Միջազգային քրեական իրավունք,
Ոստիկան և քաղաքացի հարաբերություններ, մարդու/իրավախախտի հոգեբանություն,
Իրավաբանական հոգեբանություն,
Գծագրություն,
Երևանի կամ Հայաստանի աշխարհագրություն,
Հանրային Կապեր,
Ֆրանսերեն,
Դատական քաղաքականություն, Նախադեպային իրավունք, Հարկային,
Համեմատական քրեադատավարական իրավունք,
Ճանապարհային երթևեկություն(գործնական), հոգեբանություն(ժեստերի լեզու),

Առարկա, որը կսովորեցնի ուստիկանին ինչպես դրսևորվել կոնֆլիկտային իրավիճակում, կրիտիկական պահերի:

9. Ձեր կարծիքով առարկայական ծրագրով նախատեսված ժամաքանակը հիմնականում բավարարո՞ւմ է առարկան յուրացնելու համար:




Ուսանողների տեսանկյունից առարկայական ծրագրով նախատեսված ժամաքանակը բավարարում է առարկան յուրացնելու համար:

10. Եթե Ձեր կարծիքով առարկայական ծրագրով նախատեսված ժամաքանակը հիմնականում չի բավարարում առարկան յուրացնելու համար, ապա նշեք թե ինչու: (Նմանատիպ, կրկնվող պատասխանները ներառված չեն)

<p>Քանի որ առարկան յուրացնելու համար հարկավոր է ուսումնասիրել յուրաքանչյուր թեման խորացված, իսկ նախատեսված ժամաքանակը՝ ցավոք, չի տալիս այդպիսի հնարավորություն, և ըստ իս ավելի լավ կլինի այդպիսի առարկաները պարզապես հանել ծրագրից, քան տիրապետել թերի կամ շատ քիչ կան առարկաներ, որոնք կարող ենք անցնել ավելի քիչ տևողությամբ, օրինակ ՃՏՊ-ն 50 րոպե, իսկ ՀՀ Մահմանադրական իրավունքը, որն ավելի ծավալուն է 95 րոպե(իհարկե ընթացքում 5 րոպե ընդմիջումով):</p>
<p>Կան ծավալուն թեմաներ որոնք լավ յուրացնելու համար ավելի շատ ժամաքանակի կարիք է առաջանում:</p>
<p>Առկա է անհասկանալի տերմինաբանություն:</p>
<p>Մեմինար պարապմունքները բավականին հեռու են միմյանցից և մինչ միջանկյալ գրելը սեմինար դասընթաց լինում է մեկ կամ մաքսիմում երկու անգամ, այսպես ուսանողը հնարավորություն չի ստանում լավ ըմբռնել հանձնարարված:</p>
<p>Մասնավորապես քրեական և քրեադատավարական իրավունքի համատեքստում բավարար ժամաքանակ նախատեսված չէ, հատկապես, յուրացնելու գործնական հմտություններ, կազմակերպելու ակտիվ քննարկումներ ու բանավեճեր:</p>
<p>Քանի որ մենք քոլեջում ենք սովորում, ենթադրվում է որ պիտի ամբողջ ծավալով չուսումնասիրենք առարկան, հետևաբար անցնում ենք բարդ առարկաներ, սակայն շատ մակերեսային, ինչի արդյունքում էլ հաստատուն ինֆորմացիա չենք ունենում:</p>
<p>Օրինակ քրեական իրավունքը ուսումնասիրվում է 3-րդ կուրսի վերջին կիսամյակ, մինչդեռ ընդգրկված է պետական քննական առարկաների շարքում:</p>

11. Ձեր կարծիքով առարկայական ծրագրերում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարում է արդյոք առարկան յուրացնելու համար:



Ուսանողության մեծամասնության տեսանկյունից առարկայական ծրագրերում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարում է առարկան յուրացնելու համար

11.1. Եթե Ձեր կարծիքով առարկայական ծրագրում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը չի բավարարում առարկայի արդյունավետ յուրացմանը, ապա նշեք ինչու: (Կրկնվող պատասխանները ներառված չեն)

Քանի որ լեկցիաների քանակն ավելի քիչ է քան սեմինարներինը:

Կրակային պատրաստություն, ՀՏՊ, Ճտպ կարծում եմ պետք են միայն գործնական պարապմունքներ:


Իհարկե, տեսական գիտելիքները ևս կարևոր նշանակություն ունեն ,բայց քոլեջի պարագայում, կապված ուսումնական պրոցեսի կարճատև լինելու հետ, հատկապես շեշտը պետք է դնել գործնական պարապմունքների վրա:

Ըստ իս` ավելի շատ ժամանակ պետք է տրամադրել , քանի որ սեմինարների և դասախոսությունների ընդհանուր ժամանակը(1 դասը 80 րոպե) ավելի քան բավարար է դասի բացատրման և յուրացման համար: Գործնական պարապմունքներն շատ ավելի կարևոր են , քանի որ անձը կարող է ունենալ տեսական գիտելիքներ, բայց պրակտիկայում(կոնկրետ լսարանում) չկարողանա դրանք ճիշտ կիրառել(օրինակ խնդիրներ լուծելիս, նյութեր կազմելիս և այլն):Կարծում եմ գործնական պարապմունքների ժամաքանակը կարելի է ավելացնել 80րոպեի փոխարեն սեմինարները և (կամ) դասախոսությունները 70 րոպե դարձնելով:

Խնդիրը հատկապես կապված է գործնական պարապմունքների հետ, քանի որ տեսականում ձեռք բերածը հնարավոր չի լինում վերածել գործնականի ,մասնավորապես վարչական և քրեական դատավարության առարկաների գործնական պարապմունքներին պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել` փորձելով տեսական գիտելիքները գործնական աշխատանքների միջոցով ամրապնդել:

Չի բավարարում,քանի որ տեսական և գործնական պարապմունքները, հիմնականում քիչ են, իսկ նման դեպքերում դասերը ավելի հետաքրքիր ու ավելի մատչելի են դառնում,քան զուտ դասախոսությամբ:

12. Ձեր կարծիքով առարկայական ծրագրի շրջանակներում ներառված նյութերը (աղբյուրներ, դասախոսություններ) բավարարո՞ւմ են ծրագրի արդյունավետ յուրացման համար:




Ուսանողության տեսանկյունից առարկայական ծրագրի շրջանակներում ներառված նյութերը գրեթե ամբողջությամբ բավարարում են ծրագրի յուրացման համար:

13. Կրթահամալիրում ողջ ուսումնառության ընթացքում նշե՞ք այն առարկաները, որոնք առաջնային եք համարում մասնագիտական

կայացման տեսանկյունից: (Կրկնվող պատասխանները ներառված չեն)


Հաղորդակցման Հմտություններ, Ոստիկանության Պատմություն, Տրամաբանություն, Կրակային Պատրաստություն, Կրիմինալոգիա, Հի Իրավապահ Մարմիններ, Օպերատիվ Հետախուզական Գործունեություն, Քրեական Իրավունք, Վարչական Գործունեություն, Քրեագիտություն, Ֆիզիկական Պատրաստականություն, Վարչական Իրավունք, Իրավունքի Տեսություն, Գործավարության Հիմունքներ և Գաղտնիության Ռեժիմ, Քաղ.Պաշտպանություն, Առաջին Բուժ Օգնություն, Քրեակատարողական Իրավունք, Վարչարարություն, Քաղաքացիական Իրավունք, Քաղաքացիական Դատավարության Իրավունք, Միջազգային Իրավունք, Տնտեսագիտություն, Փիլիսոփայություն, Հանցագործությունների Ռեցեդիվ, Հռոմեական Իրավունք, Վարչական Վարույթ՝ Իրենց Մասնավոր Դրսերումներով, Անգլերեն, Ռուսերեն, Հայոց Լեզու, Մանկավարժություն և Հոգեբանություն Ոստիկանության Ծառայողի Գործունեության Մեջ, Պետության և Իրավունքի Տեսություն, Հայոց Պատմության Հիմնահարցեր, Ոստ. Ծառայողի Էթիկա, Քրեական Դատավարության Իրավունք:

14. Ձեր կարծիքով տրամադրված գրականությունը բավարարում է արդյո՞ք մասնագիտական առարկաների վերաբերյալ ամբողջական գիտելիք ստանալու համար:



Ուսանողության տեսանկյունից տրամադրված գրականությունը գրեթե ամբողջությամբ բավարարում է մասնագիտական առարկաների վերաբերյալ ամբողջական գիտելիք ստանալու համար:

15. Ձեր կարծիքով լսարանների քանակը բավարարու՞մ է այսպիսի դասընթացները լիարժեք կազմակերպելու համար:



Ուսանողության տեսանկյունից լսարանների քանակը գրեթե ամբողջությամբ բավարարում է դասընթացները լիարժեք կազմակերպելու համար:

16. Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված ի նչ առաջարկներ ունեք:

Ավելացնել ֆիզկուլտուրայի դասաժամերը, շատացնել սեմինարները:

Ավելի շատ պրակտիկ գիտելիքների փոխանցում:

Դասերը անցկացնել նաև էլեկտրոնային տարբերակով:

Տրամադրել ավելի շատ նյութեր , քանի որ ոչ բոլորն են կարողանում օգտվել հավելյալ գրականությունից:

Տեսական և պրակտիկ ոլորտները միմյանցից կտրված չլինելու համար դասախոսական աշխատանքի անցնեն առնվազն 7 տարի ուստիկանության որևէ ստորաբաժանումում պրակտիկ աշխատակիցներ:

Դասախոսության ժամանակ չգործի << թելադրության>> մեթոդը, դասախոսություններն անցնեն ինտերակտիվ քննարկումների ձևով, դասախոսը սեմինար պարապմունքին պատրաստվելու համար ներկայացնի միայն նյութի վերնագիրը և ունկընդիրներն ինքնուրույն տարբեր աղբյուրներից պատրաստվեն սեմինար պարապմունքներին:

Սեմինարներն անցնեն տարբեր մեթոդներով, այսինքն ունկընդիրների՝ ամբիոնից պատասխանելու և գնահատվելու, ապա մյուսը նույն կերպ սկզբունքը, չլինի սեմինարի անցկացման միակ ձևը:

Սեմինարների համար ծրագրով նախատեսված լինի, որ ունկընդիրը պետք է տվյալ առարկայից պարտադիր ներկայացնեն

ա. պրեզենտացիաներ, նախատեսված քանակով, այսինքն օրինակ, եթե ընտրական համակարգը ծրագրով նախատեսված է պրեզենտացիա, ապա գեկույցը չի համարվի լիարժեք պատասխան:

բ. հոդվածներ, որտեղ ունկընդիրները նախատեսված թեմայի վերաբերյալ կներկայացնեն սեփական հայացքները:

գ. գեկույցներ, որի միջոցով վեր կհանվեն վիճահարույց հարցեր և գիտնականների համապատասխան դիրքորոշումներ:

Մեմբերների ժամանակ ունկընդիրները բաժանվեն խմբերի և պաշտպանեն հակառակ տեսակետներ: Ամեն կիսամյակում կրթահամալիրի դասախոսական անձնակազմի և ղեկավարության առջև յուրաքանչյուր ունընկդիր ներկայացնի զեկույց, և պատասխանի առաջադրված հարցերին, նպատակն է ունկընդիրի համար ստեղծել թեզի պաշտպանության իմիտացիա, որպեսզի նա պատրաստ լինի գիտական գործունեությամբ զբաղվելու, կարողանա պաշտպանել սեփական տեսակետը, հետագայում ուստիկանության շահերը վստահ և արդյունավետ պաշտպանելու համար:

Առաջնահերթ՝ հարստացնել գրադարանը, ստեղծել քարտադարան և ապահովել հասանելիությունը:

Ոչ մասնագիտական առարկաների ծանրաբեռնվածությունից ազատել:

Գործնական պարապմունքների հաճախակի անցկացում, պրակտիկա:

Կրթահամալիրում անցկացվող տնտեսական աշխատանքները որոշ չափով խանգարում են ուսումնական գործընթացին, խնդրում ենք լուծել հարցը:

Բոլոր տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորություն տալ, նոր ծրագրերի կիրառում

Կիսնդրեի այս առաջարկի վրա առանձնակի ուշադրություն դարձնել: Շատ հաճախ որոշ առարկաների շրջանակներում առաջանում են հարցեր, որոնց պատասխանը կարող է տալ մեկ այլ փոխկապակցված առարկա: Այդ հարցի բավարարման համար պահանջվում է ժամանակ, և դասախոսը կամ պետք է բացատրի այն, ինչի արդյունքում շեղվում է իր դասախոսությունից՝ թողնելով կիսատ, կամ շարունակի դասախոսությունը՝ հարցը թողնելով չբավարարված կամ էլ թողնելով համապատասխան առարկայի դասախոսի բացատրությանը, ինչը առաջացնում է խիստ անհարմարություն:

Բերեմ օրինակ հստակեցնելու համար:

Կրիմինալոգիայի ժամին կարող է հարց բարձրացվի, որը վերաբերվում է քրեական իրավունքին: Եթե դասախոսը սկսի բացատրել քրեականը, իր դասախոսությունը կմնա թերի կամ էլ ընդհանրապես չի լինի: Ստիպված հարցը պահանջվում է ուղղել քր.իր. դասախոսին, ում բացատրման ընթացքում էլ առաջանում են հարցեր, որոնք վերաբերվում են կրիմինալոգիային կամ քրեական դատավարության իրավունքին:

Առաջարկս այսպիսին է. շաբաթը գոնե 1 օր տրամադրվի <<խառը դասախոսություններին>>: Օրինակիս հիման վրա կստացվի դասախոսություն կրիմինալոգիայի, քր. իր-ի, քր. դատ. իր.-ի դասախոսների ընդհանուր մասնակցությամբ, կամ օրինակ ՀՏ-ՕՀԳ, վարչ. իր, քաղ.իր., քաղ. դատ, հաղորդակցման հմտություններ, էթիկա, հոգեբանություն և այլն: Այսպես կբարձրանա դասախոսությունների հագեցվածությունը, արդյունավետությունը, հետաքրքրությունը դրանց նկատմամբ, ուսանողների մոտ գիտելիքների աճը և բազմակողմանի զարգացումը:

Պրակտիկաների ժամաքանակը ավելացում:

Մասնագիտական առարկաների ժամաքանակի ավելացում :

Կցանկանայի, որպեսզի դասախոսությունները անցնեն վիդեո տարբերակներով, ֆիլմերի դիտմամբ, ինտերակտիվ:

Վարչականին և քրեականին վերաբերող առարկաների դասաժամերի ավելացում:

Հանել վերակարգերը:

Տեսության հետ զուգահեռ պրակտիկ փորձի ուսումնասիրում:

Առաջարկում եմ գործնականների ժամաքանակները շատացնել:

Աշխատանքի ընթացքում օգտագործվող փաստաթղթերի ուսումնասիրում ,որպեսզի պրակտիկայում ձևավորված սխալների կատարումը մեր կողմից բացառվի:

Կրթահամալիրի գրադարանի հարստացում մասնագիտական գրականությամբ, միննույն ժամանակ որպես ուսանող հավաստիացնում եմ՝ հենց ուսանողը զգաց, որ չսովորելով չի էլ ստանա, կսովորի, մի փոքր խիստ եղեք:

Դասաժամերի ավարտը լինի 14:20 և տարածքի մաքրություն չլինի, որպեսզի կարողանանք ժամանակին տուն հասնել ու տրամադրվել դասերին:

Հետամուտ լինել գիտագործնական միջոցառումների անցկացման նկատմամբ, կազմակերպել գործնական պարապմունքներ, բանավեճեր, դասախոսություն-քննարկումներ, հարց-պատասխաններ, ապահովել առաջավոր փորձի կիրառումը:

Կրթության արդյունավետությունը բարձրացնելու համար առաջին հերթին ուշադրություն դարձնել տրամադրվող նյութերին, դասախոսություններին, ուղղագրությանն ու կետադրությանը, մտքերի շարադրությանը, ստեղծել միասնական էլեկտրոնային գրադարան, կազմակերպել մասնագիտական կինոդիտումներ, կառուցել դատական նիստերի ուսումնական դահլիճ:

Կրակային պատրաստականության գործնական դասաժամերը ավելացնել:

Իրավունքի ճյուղերը ուսումնասիրել ավելի երկար ժամանակահատվածում:

Կազմել խմբակներ ըստ առարկաների:

Ավելացնել մասնագետներ:

Առաջին հերթին կարող եմ նշել այն խնդիրը, որին առնչվել եմ ուսումնառության ընթացքում, այն է՝ մասնագիտական գրականության ոչ բավարար հագեցվածությունը գրադարանում և դրա՝ ուսանողների համար ոչ բավարար մատչելիությունը:

Էթիկա առարկան մեղմ ասած իմաստ չունի, խնդրում ենք հանել: *(Պատասխանը ենթադրում է այլ հիմքեր)*